

Արփինե Մ. Ավետիսյան

ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ ՆԵՐԲՈՂՆԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – Ներսես Լամբրոնացի, Կիլիկիա, եկեղեցական գործիչ, ներբող, նորակազմություններ, ածական, բայ, գոյական, մակբայ, ածանցավոր:

Մուտք. Ներսես Լամբրոնացին և նրա ներբողները

Ներսես Լամբրոնացին (1153–1198 թթ.) հայ միջնադարյան գրականության բազմաշնորհ ներկայացուցիչներից է, ով հայտնի է ամենատարբեր ասպարեզներում իր բեղուն գործունեությամբ. նա հեղինակել է ներբողներ, տաղեր, շարականներ, ճառեր, մեկնություններ, կատարել թարգմանություններ: Զուգահեռաբար՝ Լամբրոնացին եղել է հասարակական-պետական գործիչ, եկեղեցու բարենորոգիչ, հզոր հրապարակախոս և քարոզիչ: Լինելով հոգևոր նշանավոր գործիչ՝ Լամբրոնացին հիմնել է գրչագրական կենտրոն, որտեղ գրիչներն իր հանձնարարությամբ ձեռագրեր են ընդօրինակել, ավելին՝ հենց ինքն է ձեռագրեր արտագրել:

Ընդ կողմից Ներսեսը իշխանական ծագում ուներ. հայրը՝ Օշին Բ-ն, Կիլիկիայի Լամբրոն բերդի տերն էր: Մայրը՝ Շահանդուխտը, Պահլավունի տոհմի ժառանգ էր. նրա երկու հորեղբայրներն էլ հաջորդաբար կաթողիկոսներ դարձան՝ Գրիգոր Գ Պահլավունին (1113–1166 թթ.), ապա նրա կրտսեր եղբայր Ներսես Շնորհալին (1166–1173 թթ.), որից հետո էլ կաթողիկոսական գահը ժառանգեց Գրիգոր Դ Տղան, որը նրանց ավագ եղբոր՝ Վասիլ Պահլավունու որդին էր: Այսպիսով՝ Լամբրոնացու համար կարծես սահմանված էր հոգևոր ծառայության ճանապարհը¹, որի շնորհիվ էլ, ըստ ամենայնի, նրա մանկությունն անցավ եկեղեցական միջավայրում: Վաղ հասակում արժանացավ քահանայական (1168 թ.), ապա՝ եպիսկոպոսական (1174 թ.) ձեռնադրությունների, իր ողջ կյանքում ամեն բան արեց ի շահ հայ եկեղեցու բարենորոգության և հայ ժողովրդի բարեկեցության, թողեց հսկայածավալ գրականություն, որը մեր ժողովրդի մշտամաս հարստությո-

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019
ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 30.01.2019:
1 Տե՛ս **Thomson R.**, Nerses of Lambron, Commentary on the Revelation of Saint John, Leuven-Paris-Dudley, MA, 2007, p. 10.

յուններից է: Ներսես Լամբրոնացու քնարական ժառանգության լեզուն աչքի է ընկնում իր բառապաշարի յուրօրինակությամբ, բառաստեղծման և բառօգտագործման ստեղծարարությունն ի վերուստ տրված էր նրան:

Մեր այս ուսումնասիրության մեջ քննելու ենք Ներսես Լամբրոնացու չորս ներբողներում վկայված և մեր կողմից վեր հանված նորակազմությունները: Մեզ համար նորագյուտ բառերի սկզբնաղբյուր ծառայած ներբողներից երեքը («Ներբողեան ի Վերափոխումն...», «Ներբողեան ի գալուստն Հոգւոյն Սրբոյ...», «Ներբողեան ի Համբարձումն...») երկար ժամանակ ավանդաբար համարվել են ձառեր, սակայն դրանք ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություններ են: Այս մասին ուսումնասիրող Գ. Հակոբյանը գրում է. «Ճիշտ չի լինի Լամբրոնացու ներբողները «ձառ» համարել և դնել նրա արձակ գործերի մեջ, ինչպես արվել է մինչև հիմա: Այդ ներբողները յուրատեսակ չափածո գործեր են՝ թեև շատ հաճախ առանց հանգերի ու տողատման, ինչպես մեր բազմաթիվ շարականներն ու տաղերը»²: Իսկ չորրորդ՝ Ներսես Շնորհալուն նվիրված «Գովեստ ներբողական պատմագրական բանի...» ներբողն ամբողջությամբ հանգավորված չափածո ստեղծագործություն է:

Լեզվի բառային կազմի նոր միավորներով համալրումը նրա հարափոփոխ հատկության արտահայտությունն է, որը կարող է իրականանալ թե՛ անհատների կողմից, թե՛ օտար լեզուների ազդեցությամբ: Լեզվի համալրումը տեղի է ունենում նորաբանությունների շնորհիվ. դրանք այն բառերն են, որոնք նոր են լեզու մուտք գործել և խոսողների կողմից ընկալվում են որպես նոր բառեր՝ կապված տվյալ ժողովրդի կյանքի ընթացիկ պահի հետ³:

Այս տեսանկյունից երբ դիտարկում ենք Ներսես Լամբրոնացու նորակազմությունները, նկատի ունենք հատկապես այն հանգամանքը, որ իրենից առաջ ոչ ոք այդ բառաձևերը տվյալ իմաստներով չի կիրառել: Ուսումնասիրությունը կատարել ենք՝ հիմնվելով գրաբարի մատենագրության պահպանված ժառանգությունն ամփոփող հեղինակավոր բառարանների ընձեռած տվյալների վրա՝ մասնավորաբար «Նոր հայկազեան բառարան»-ի (այսուհետ՝ ՆՀԲ)⁴: Բաղադրյալ բառերում բաղադրիչների հավելման հերթականությունը նշելու համար օգտվել ենք Սերգեյ Գալստյանի մեթոդից⁵, ըստ որի՝ կոր փակագծերում՝ () դրել ենք արմատները, իսկ եթե բառն ունի երկուսից ավելի իմաստակիր բաղադրիչներ, ապա բառակազմական քայլերի հերթականությունը նշել ենք ուղիղ՝ || փակագծերով:

Առանձնացրել ենք նորակազմությունների երկու խումբ.

ա) նորակազմություններ, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում,

բ) բառեր, որոնք վկայված են ՆՀԲ-ում, սակայն օրինակները բերվում են միայն Ներսես Լամբրոնացու ներբողներից:

2 Հակոբյան Գ., Ներսես Լամբրոնացի, Եր., 1971, էջ 15:

3 Տե՛ս Մարտիրոսյան Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները, Եր., 2007, էջ 30:

4 Բառարանների ամբողջական ցուցակը ներկայացված է օգտագործված գրականության ցանկում:

5 Տե՛ս Գալստյան Ս., Դպրոցական բառակազմական բառարան, Եր., 2011, էջ 6:

1. Նորակազմություններ, որոնք վկայված չեն գրաբարի բառարաններում

Աննիրհական, [ան(սիրհ)]ական – ՆՀԲ-ում «որ ոչ սիրիէ, աննինջ, անքուն» բացատրությամբ կան *աննիրհ* և *աննիրհելի* ածականները, որոնք երբեմն կիրառվում են նաև հրեշտակներին բնորոշելիս: Լամբրոնացին էլ, ի հավելումն սրանց, *-ական* վերջածանցով ստեղծում է մի նոր ածական, որը կիրառում է «հրեշտակային» իմաստով՝ «Տէր մեր հոգւոյն սրբոյ դարան// Տաճար, աթոռ և օթարան// Եկեղեցւոյ մեծ զգայարան// Երեսք արթուն՝ *աննիրհական*» (*Գովեսար ներբողական, էջ 492*)⁶:

Ընկլուզեալ, [(ընկլ)ուզ]եալ – ՆՀԲ-ում բերված է *ընկլուզանեմ* ձևը հետևյալ բացատրությամբ՝ «իբր կլանելով ի վայր սուզանել, հեղձուցանել»: Լամբրոնացու ներբողում բառը գոյականական կիրառությամբ ածական է՝ *ընկլուզեալք*, որն ունի *խեղդվածներ, սուզվածներ* նշանակությունը՝ «Այսօր խաւարաւ պատրանաց աշխարհի *ընկլուզեալքս*// Ընկալաք զլոյսն իմանալի» (*Ի գալուստն Հոգւոյն Սրբոյ, էջ 100*)⁷:

Թագնական, [(թագ)ն]ական – *Թարուն* կամ *թագուն* ածականից *-ական* վերջածանցով կազմված մի նոր ածական, որը տեքստում կիրառված է «ոչ» ժխտականի հետ՝ «ո՛չ թագնական», և ունի «անթաքույց, ակնհայտ, բացահայտ» իմաստները՝ «Որպէս և նա վարդապետեալ// Ոչ *թագնական*// Այլ ի յայտնի և լուսատու// Որք յայն փութան» (*Գովեսար ներբողական, էջ 496*):

Թևասքոյ, (թև)ա(ս)քոյ – ՆՀԲ-ում կա միայն *թևասքոյեմ* բայը՝ «թևով որպես քօղով պատել և ծածկել զինքն առ պատկառանաց» բացատրությամբ: Այս բայը հիմնականում կիրառվում է սերովբեներին⁸ բնորոշելու համար. Լամբրոնացին նորակերտ *թևասքոյ* ածականը նույնպես կիրառում է սերովբեների այդ հատկանիշն ընդգծելու համար՝ «Ի կառս քերովբէից Աստուածդ բազմեալ// *Թևասքոյ* սերօբէիքն սրբաբանեալ» (*Ի Վերափոխումն*)⁹:

Հայրենագաւառ, [(հայր)են]ա(գաւառ) – *Հայրենի*՝ «սեպիական հօր, և հարց, և նախնեաց» և *գաւառ*՝ «*նահանգ, աշխարհ առանձինն, կողմն աշխարհի, մանաւանդ հայրենի երկիր*» բառերի միավորմամբ կազմված գոյական, որը տեքստում կիրառվում է «հայրենի երկիր» նշանակությամբ՝ «Քանզի յերևեալ դարձուցանողին զգերութիւն մարդկան// Ի պանդուխտս վայրէ ի *հայրենագաւառն* վերին» (*Ի Վերափոխումն*)¹⁰:

Պարարիչ, (պարար)իչ – ՆՀԲ-ում վկայված է *պարարել* «պարարտացնել, գիրացնել» բայը, *պարարումն* գոյականը և *պարարուն* ածականը: Լամբրոնացին-իչ դերբայական մասնիկով ներգործական նշանակությամբ ստեղծ

6 **Ներսէս Շնորհալի**, Թուրթ ընդհանրական, Էջմիածին, 1865:

7 **Ներսէս Լամբրոնացի**, Ատենաբանութիւն և ճառք, Կալկաթա, 1851:

8 «Սերովբե»-ն երբայերեն բառ է, որ նշանակում է վառվող, կիզվող: Սուրբ Գրքում այս բառը հանդիպում է միայն Եսայու մարգարեության վեցերորդ գլխում, ըստ որի՝ սերովբեներն ունեն վեց թևեր, որոնցից երկուսով թռչում են, իսկ մյուս երկու գույգ թևերով ծածկում իրենց երեսներն ու ոտքերը (Ես. 6:2): Ըստ Սուրբ Հովհան Ոսկեբերանի՝ սերովբեներն այսպես են վարվում այն պատճառով, որ ի վիճակի չեն դիմանալու Տիրոջ Գահից ճառագող աստվածային փառքի լույսին և, ինչպես մարդիկ են երեսները ծածկում կայծակի փայլատակման ժամանակ, այնպես էլ նրանք, մշտապես Աստծո առաջ լինելով, սեփական թևերով սքողում են իրենց:

9 Հայկալի Քառասուն մանկունք եկեղեցու մատենադարան, ձեռ. 141, էջ 232:

10 ՄՄ ձեռ. 2682, թ. 2 ր:

ծել է *պարարիչ* ածականը, որը տեքստում «անուցող» իմաստն ունի՝ «... և սեղանատրեցից զանապական կերակուր՝ հոգուց *պարարիչ*» (Ի *գալուսարն Հոգւոյն Սրբոյ, էջ 99*):

2. Բառեր, որոնք վկայված են ՆՀԲ-ում, սակայն օրինակները բերվում են միայն Ներսես Լամբրոնացու ներբողներից

Քարծրաբազուկ, (բարձր)ա(բազուկ) – ՆՀԲ-ում բառն ունի և՛ ածականական, և՛ մակբայական նշանակություն հետևյալ բացատրությամբ՝ «*բարձր բազկաւ, հզօր զօրութեամբ, պանծալի փառօր և յաղթութեամբ*»: Լամբրոնացին Քրիստոսի Լամբարձմանը նվիրված իր ներբողում այս բառը կիրառել է որպէս մակբայ՝ «... և **բարձրաբազուկ** ի վերայ թշնամեաց մեր ճախրեսցուք» (Ի *Լամբարձումն, էջ 75*)¹¹:

Քոստրատիպ, (քոստր)ա(տիպ) – անվանի հայագետ Ժան-Պիեռ Մահեն հանգամանալից քննում է «քոստր»-ի ծագման հարցերը և բավական հետաքրքիր դիտարկումներ անում¹². նա նշում է, որ «քոստր»-ը ոչ թե գույն նշանակող ածական է, այլ տեղանուն՝ Պաղեստինի Բոսրա (Bosra) ավանը (ներկայիս՝ Bouseira), որը գտնվում է Հորդանան գետի մյուս ափին, Մեռյալ ծովից 30 կմ հարավ: Ջոն Գրեյի ներառմամբ՝ Կյուրեղ Երուսաղեմացին «Կոչումն ընծայության» իր քարոզներում, համեմատելով Եսայու գրքի հերոսի արյունաթաթախ լաթերը Պիղատոսի դատարանում Հիսուսի հագած կարմիր զգեստի հետ, սխալ է եզրակացրել, թե «քոստր» «կարմիր» է նշանակում. «Իրականում ո՛չ թե «Քոստր», այլ «Եդոմ» բառը կարմիր գույնի հետ կապ ունի: Կարելի է կարծել, թե «Եդոմ» և «Քոստր» բառերը պարունակող մարգարեության մեկ տունը կարդալիս Կյուրեղը սխալվել է՝ վերջինիս վերագրելով առաջինի բացատրությունը»¹³: Կարմիր գույնի իմաստով «քոստր» բառի ամենահին օրինակները կարելի է գտնել Գրիգոր Նարեկացու, իսկ հետագայում նաև Ներսես Շնորհալու և այլոց երկերում: Ներսես Լամբրոնացին իր՝ Քրիստոսի համբարձմանը նվիրված ներբողում կիրառում է մի նոր ածական՝ «քոստրատիպ», որն ունի «*արիւներանգ, կարմրորակ*» նշանակությունները՝ «...Մարմնոյ հանդերձ արիւնտ ընդեր զգեցեալ ես ի վերայ աստուածութեանդ փառաց// Եւ **քոստրատիպ** գունովդ զնոյն պաճուճեալ» (Ի *Լամբարձումն, էջ 94*):

Գերեղարձ, (գեր)ե(ղարձ), [գերի+ա>ե], [ղարձ<ղարձն՝ դառնալ-ի բայական բուն արմատը] – ՆՀԲ-ում այս բառի խոսքիմասային երկու տարբերակներ կան իրենց օրինակներով. որպէս գոյական այն ունի «*ղարձ գերեաց կամ գերութեան*» նշանակությունը, այսինքն՝ խոսքը գերիների դարձի երևույթի մասին է: Ածականական կիրառությունը նորակազմություն է, և այս դեպքում բառն ունի «*ղարձոցից գերեաց կամ գերութեան*», այսինքն՝ *գերիներին վերաղարձնող* նշանակությունը՝ «Ջի **գերեղարձն** զմեզ յերկնից քաղաքն ածեալ ամրացոյց» (Ի *Լամբարձումն, էջ 76*):

Կարմրաներկ, (կարմր)ա(ներկ), [կարմր<կարմիր] – կարմիր և ներկ

11 Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանություն և ճառք, Կալկաթա, 1851:

12 Տե՛ս Մահէ Ժ. Պ., «Քոստր» ածականը Նարեկացու տաղերում. Առասպելական մի գույն, «Բանբեր Մատենադարանի», Եր., 2018, էջ 5-13:

13 Նոյն տեղում, էջ 7:

բառերի համադրմամբ ստեղծված մի նոր ածական՝ «*ներկեալ ի գոյն կարմիր*»: Բառի իմաստն ուղղակիորեն բխում է բաղադրիչների իմաստից՝ *կարմրերանգ, ծիրանի*՝ «Եւ թէ պարզ բնութիւն անմարմին// *Կարմրաներկ* պատմուճանաւ մարմնոյ ճրպէս զարդարեալ// Իբր զփեսայ ընդ առագաստ երկնից սիգալով ընթանայ» (Ի *Համբարձումն*, էջ 92):

Համանմանություն, [համա(նման)]ություն – ՆԸԲ-ում այս գոյականը տրվում է հետևյալ բացատրությամբ՝ «*նմանակցություն, նմանություն, նմանոն լինել*»։ նշված օրինակներից երևում է, որ Լամբրոնացին իր աշխատություններում հաճախ է կիրառել այս բառը՝ «Հոգիս ներգործութեան յօրինէ գղասակարգութիւն աստիճանաց տաճարին// Ի *համանմանություն* երկնաւորացն պարուց» (Ի *գալուստն Հոգւոյն Սրբոյ*, էջ 120):

Մեծարիչ, [(մեծ)ար]իչ – ՆԸԲ-ում տրված է մեծարեմ բայը, որ նշանակում է «*մեծ առնել, մեծացուցանել, գովել, փառավորել*»։ *մեծարիչը* Լամբրոնացին կիրառել է որպես ածական՝ «*որ մեծարէ, մեծարող*» իմաստով՝ «Մարտիրոսացն *մեծարիչ*// Չարչարանաց նոցին գովիչ// Ճգնավորաց փառաւորիչ// Հայրապետաց վարուց պատմիչ» (Գովեստր *ներբողական*, էջ 469):

Սառնամածեալ, (սառն)ա(մած)եալ – ՆԸԲ-ում կան սառնամած և սառնամածեալ ածականները՝ «*մածեալ սառամբ կամ որպէս խառըն ընդ սառին*» բացատրությամբ։ Հղումը տրված է միայն Լամբրոնացու երկերից։ Լամբրոնացին կիրառել է «*սառնամածեալ ախպր*» (Գովեստր *ներբողական*, էջ 475) արտահայտությունը՝ ներկայացնելով ախտերի, մեղքերի՝ սառույցի պես քարացած լինելը։

Սիգաճեմել, (սիգ)ա(ճեմ)ել, [սիգ-սէգ] – սիգալ «*պերճանալ, յոխորտալ, փքանալ*» և ճեմել «*շրջագայիլ, քայլել գբօսանօք*» բառերից կազմված մի նոր բայ, որ ՆԸԲ-ում բացատրվում է որպես «սիգալով ճեմել, սիգաքայլ լինել»՝ «Ուրախացիր փեսայ բերկրեալ// Յեկեղեցի *սիգաճեմեալ*// Լուսոյ նշոյլ ի սա ծագեալ// Արևդ ի մայր վերադարձեալ (Գովեստր *ներբողական*, էջ 495):

Ստորահեղույ, (ստոր)ա(հեղ)ույ – այս բայի բաղադրիչներից արդեն հասկանալի է իմաստը, ըստ ՆԸԲ-ի՝ «*ի վայր հեղույ, ստորածորիլ, ստորահոսել*»։ Բառարանում նշված օրինակներից պարզ է դառնում, որ Լամբրոնացին տարբեր աշխատություններում հաճախ է կիրառել բառը. մեր ուսումնասիրության առարկա տեքստերում բառը բնութագրում է հրեշտակների վար իջնելը՝ «*Ստորահեղան* գուարթունք, գումարեցան անմարմինք// Իջին սերաբէք, խոնարհեցան քերաբէք» (Ի *Վերափոխումն*)¹⁴։

Սրտաբորբոք, (սրտ)ա[(բորբ)ոք] – ՆԸԲ-ում այս ածականը տրված է հետևյալ նշանակությամբ՝ «*բորբոքեալ սրտիւ, անձկալից, ջերմեռանդն*»՝ «Իւրաքանչիւր ոք ի զգայարանացն *սրտաբորբոք* գթով համբուրէր և ասէր...» (Ի *Վերափոխումն*)¹⁵։

Տաղերգություն, (տաղ)(երգ)ություն – ՆԸԲ-ում բառը բացատրվում է որպես «*տաղասացություն, երգարանություն*»։ Այս գոյականով արտահայտվում է տաղը երգելու երևույթը, ըստ Վարագ Ներսիսյանի՝ Լամբրոնացու խոսքն այստեղ վերաբերում է Շնորհալու կողմից տաղերը երգելու նպատա-

14 Հալէպի Քառասուն մանկունք եկեղեցու մատենադարան, ձեռ. 141, էջ 289: 15 Նույն տեղում, էջ 240:

կով հարմար, պատշաճավոր երաժշտությամբ հորինելուն¹⁶ «Շարականաց կարգ աձեցնէր// **Տաղերգութիւնս** ի ձահ առնէր// Քաղցր ձայնիւք անջրպետէր// Որ երաժիշտ Սուրբ Հոգւոյն էր» (*Գովեսար ներքողական*, էջ 477):

Ամփոփում

Խոսքիմասային պատկանելության տեսանկյունից բնութագրելով Լամբրոնացու ստեղծած բառային միավորները՝ կարող ենք նշել, որ մեր գտած նորակազմությունների մեջ գերակշռում են ածականները՝ **տասնմեկ**, ունենք **երկու** բայ, **երեք** գոյական և **մեկ** մակբայ: Այս բոլոր բառերը բնորոշ են բարձր բանաստեղծական ոճին, բոլորը բաղադրյալ կազմություններ են՝ ածանցավոր կամ բարդ, բարդածանցավոր: Ունենք հունարան նախածանցներով երկու բառ բայական կամ գոյականական վերջածանցներով՝ **համանմանութիւն**, **ստորահեղուլ**: Մեկ բառ ունի բնիկ *ան*- ժխտական նախածանց և *-ական* վերջածանց՝ **աննիրհական**: Վերջածանցներից հանդիպում են *-իչ*, *-եալ*, *-ոթոյն* բառակազմական ձևայինները՝ **մեծարիչ**, **պարարիչ**, **սառնամածեալ**, **համանմանութիւն**, **տաղերգութիւն**: Բարդությունները կազմված են ա հոդակապով, ածական+գոյական՝ **բոսորատիպ**, **հայրենագաւառ**, **կարմրաներկ**, **բարձրաբազուկ**, ածական+բայարմատ՝ **սառնամածեալ**, գոյական+բայարմատ՝ **սրտաբորբոք**, **թևասքոլ** կաղապարներով:

Ածական – **աննիրհական**, **բոսորատիպ**, **գերեղարձ**, **ընկլուզեալ**, **թագնական**, **թևասքոլ**, **կարմրաներկ**, **մեծարիչ**, **պարարիչ**, **սառնամածեալ**, **սրտաբորբոք**,

Բայ – **սիգաձեմել**, **ստորահեղուլ**,

Գոյական – **համանմանութիւն**, **հայրենագաւառ**, **տաղերգութիւն**,

Մակբայ – **բարձրաբազուկ**:

Կարևոր է նշել, որ այս նորակազմությունները ստեղծվելուց հետո կյանքի են կոչվել և բազմիցս կիրառվել թե՛ հեղինակի, թե՛ այլոց կողմից, դրանց մի մասը մտել է մեր լեզվի մեջ և կենսունակ է մինչ օրս, ինչպես՝ **բարձրաբազուկ**, **բոսորատիպ**, **գերեղարձ**, **համանմանութիւն**, **հայրենագաւառ**, **կարմրաներկ** (ձեռք է բերել նաև գոյականական իմաստ), **մեծարիչ**, **սառնամածեալ**, **սրտաբորբոք**, **սիգաձեմել**, **ստորահեղուլ**, **տաղերգութիւն**¹⁷:

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ նշենք, որ սա անդրադարձ էր Ներսես Լամբրոնացու քնարական ստեղծագործության մի փոքր հատվածին միայն, քանի որ հեղինակը՝ որպես բառաշինարար աչքի է ընկնում նաև իր արձակ ստեղծագործություններում, հատկապես թարգմանական գրականության մեջ:

Արփինե Մ. Ավետիսյան – մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի պատմությանը՝ մասնավորապես պատմական բառագիտությանը, ինչպես նաև համեմա-

16 Տե՛ս **Ներսիսյան Վ.**, Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Եր., 1984, էջ 179:

17 Հմտ. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հր. Աճառյանի անվ. Լեզվի ինստիտուտ, Եր., 1969, **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

տական լեզվաբանությանը առնչվող թեմաները: Զուգահեռաբար ուսումնասիրում է լատիներեն և հունարեն:

Էլ. հասցե՝ arpavetissyan@gmail.com

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Summary

THE NEOLOGISMS IN THE PANEGRICS OF NERSES LAMBRONATSI

Arpine M. Avetisyan

Key words – Nerses Lambronaci, Cilicia, church figure, panegyric, neologisms, adjective, verb, noun, adverb, derivative.

Nerses Lambronatsi (1153–1198) is one of the prominent representatives of the Armenian medieval literature. He is known by his diverse activities in various fields. Lambronatsi is an author of many panegyrics, anthems, sharakans, speeches, interpretations and translations. The language of Nerses Lambronatsi's poetic heritage has unique vocabulary: he is not only a great poet, but also an original word maker. There are about twenty neologisms in his panegyrics that we have chosen based on the "New Dictionary of Old Armenian Language". These neologisms have been quite viable, some of them have been incorporated into a collaborative vocabulary and are still being used.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, 2019 թվ. հունվար-մարտ, 2019 թվ. (65), հոմվար-մարտ, 2019 թվ. (65) քառր, թիվ 1 (65)

Резюме

НОВООБРАЗОВАНИЯ В ОДАХ НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ

Арпине М. Аветисян

Ключевые слова – Нерсес Ламбронаци, Киликия, церковный деятель, ода, новообразования, прилагательное, глагол, существительное, наречие, производный.

Нерсес Ламбронаци (1153–1198) один из выдающихся представителей армянской средневековой литературы, который известен своей разнообразной деятельностью в различных областях. Он автор песен, стихов, гимнов, речей, толкований и переводов. Язык лингвистического наследия Ламбронаци лексически уникален, он не только великий поэт, но и оригинальный слово-создатель. Его оды содержат почти два десятка новообразований, которые мы выделили на основе «Нового словаря армянского языка». Эти новообразования были весьма жизнеспособны: некоторые из них были включены в общеупотребительную лексику и все еще используются.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, 2019 թվ. հունվար-մարտ, 2019 թվ. (65), հոմվար-մարտ, 2019 թվ. (65) քառր, թիվ 1 (65)

REFERENCES

1. **Agh'ayan E.**, Ardi hayereni bacatrakan bar'aran, Ye'r., 1976 (**In Armenian**).
2. **Akinean N.**, Nerses Lambronaci, Vienna, 1956 (**In Armenian**).
3. **Awetiqean G., Siwrmelean X., Awgerean M.**, Nor bar'girq haykazean lezui. Tparan i Srboyn Gh'azaru. Venetik, 1836-1837 (**In Armenian**).
4. **Awgerean M., C''elalean G.**, Ar'dz'er'n bar'aran haykazyan lezui. Surb Gh'azar. Venetik. 1865 (**In Armenian**).
5. **Galstyan S.**, Dprocakan bar'akazmakan bar'aran, Ye'r., 2011 (**In Armenian**).
6. **Gh'azaryan R'. S.**, Grabari bar'aran. Erevani Hamalsarani Hratarakch'ut'yun. Ye'r., 2000 (**In Armenian**).
7. **Gh'azaryan R'. S., Avetisyan H. M.**, Norahayt bar'er grabarum. Erev'ani Petakan Hamalsaran, Ye'r., 2007 (**In Armenian**).
8. **Hakobyan G.**, Nerses Lambronaci, Ye'r., 1971 (**In Armenian**).
9. Halepi Qar'asun mankunq yekegh'ecu matenadaran, N 141 (**In Armenian**).
10. **Hovhannisyan L. Sh'.**, Grabari bar'aran - Nor haykazyan bar'aranum ch'vkayvac' bar'er. Edit' Print, Ye'r., 2010 (**In Armenian**).
11. **Mahe Zh'. P.**, «Bosor» ac'akanə Narekacu tagh'erum. Ar'aspelakan mi guyn, Banber Matenadarani, Ye'r., 2018 (**In Armenian**).
12. **Malxaseanc St.**, Hayeren bacatrakan bar'aran, Ye'r., 1944, Hr. Ac''ar'yani anv. lezvi institut, Zh'amanakacic hayoc lezvi bacatrakan bar'aran, Ye'r., 1969 (**In Armenian**).
13. **Martirosyan A.**, Ardi hayereni norabanut'yunneri bar'akazmakan kagh'aparnerə, Ye'r., 2007 (**In Armenian**).
14. MM N 2682 (**In Armenian**).
15. **Nerses Lambronaci**, Atenabanut'yun yev' c''ar'q, Kalkat'a, 1851 (**In Armenian**).
16. **Nerses Sh'norhali**, T'ugh't' əndhanrakan, Ejmiac'in, 1865 (**In Armenian**).
17. **Nersisyan V.**, Hay mijnadaryan grakanut'yan zh'anrer, Ye'r., 1984 (**In Armenian**).